Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

« 12 » Փետրվար 2019թ. **ք. Վանաձոր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Դ.Մատինյանս, ուսումնասիրելով 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 04637200 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.10.2018թ.-ին տրված թիվ ԼԴ/3267/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Վալենտինա Լիպարիտի Սահակյանից և Էրիկ Վիգենի Սահակյանից համապարտության կարգով հօգուտ “Կոնվերս բանկ” ՓԲԸ-ի բռնագանձել 1.458.484 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ: Բռնագանձումը տարածել 04.12.2014թ. կնքված թիվ 482780-N1C386735 վարկային և երրորդ անձի գույքի գրավի պայմանագրով գրավադրված ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճ. 109 շենքի 57 հասցեի բնակարանի վրա:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5%, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների կատարման ընթացքում արգելանք է կիրառվել համապարտ պարտապան Վալենտինա Լիպարիտի Սահակյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող, գրավի առարկա հանդիսացող՝ ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճ. 109 շենքի 57 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի վրա, որը փորձագիտական եզրակացության համաձայն գնահատվել է ընդհանուր 7.460.000 ՀՀ դրամ, որի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացման մեկնարկային գները չեն բավարարում կատարողական թերթի պահանջների կատարմանը:

Էրիկ Վիգենի Սահակյանին պատկանող բռնգանձման ենթակա գույք, դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, և ի հայտ են եկել սնանկության հատկանիշներ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնում առկա է հապարտ պարտապան Վալենտինա Լիպարիտի Սահակյանի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.10.2018թ.-ին տրված թիվ ԼԴ/3277/02/17 կատարողական թերթի / պահանջատեր՝ “Կոնվերս բանկ” ՓԲԸ / հիման վրա գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ հարուցված այլ կատարողական վարույթ:

Պահանջատեր “Կոնվերս բանկ” ՓԲԸ-ն գրավոր տեղեկացրել է, որ պարտապանի պարտավորության չափը 27.10.2018թ.-ի դրությամբ՝ թիվ ԼԴ /3267/02/17 կատարողական թերթով կազմում է 2.293.388 ՀՀ դրամ, թիվ ԼԴ /3277/02/17 կատարողական թերթով կազմում է 2.343.742 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 37-րդ հոդվածի 8-րդ կետով և 39 հոդվածներով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 06.02.2019թ.-ին վերսկսված թիվ 04637200 կատարողական վարույթը՝ 60-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճեն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ավագ հարկադիր կատարող՝ ***Դ. Մարինյան***